ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 335 էջ

Բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Սահակյանի սույն մենագրությունը նվիրված է XVI—XVII դդ. բանաստեղծության առանձնահատկություններին և զարգացման հիմնական միտումներին։ Հիշյալ ժամանակաշրջանի հայ բանաստեղծությունն իր ամբողջության մեջ գրեթե չի ուսումնասիրված. ուսումնասիրվել են միայն դարաշրջանի նշանավոր բանաստեղծները (Նաղաշ Հովնաթան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեմիա Քյոմուրճյան)։ Մինչդեռ XVI—XVII դդ. հատի՛ւ՛շվում են մի քանի տասնյակի հասնող բանաստեղծների անուններով, որոնցից մի մասի կյանքին ու առանձին քերթվածներին անդրադարձել էր հայ բանասիրությունը, երբեմն գրականագիտական հպանցիկ գնահատումներով։ Հ. Սահակյանը մեր գրականագիտության մեջ առաջինն է, որ իրականում է ամբողջական հետազոտության ենթարկել հիշյալ դարաշրջանի առայժմ հայտնի բանաստեղծական բոլոր արդյունքները՝ իրենց շոշափած բոլոր թեմաներով, մոտիվներով, գաղափարական ու գեղարվեստական առանձնահատկություններով, զարգացման ընդհանուր օրինաչափություններով։

Հեղինակը, ինչպես նշված է մենագրության մեջ, իր հետազոտությունը գրելուց առաջ, միջնադարյան ձեռագրերից ու տպագիր տարբեր աղբյուրներից հավաքել է XVI—XVII դդ. բոլոր բանաստեղծների երկերը, կազմել և տպագրության է պատրաստել դրանց քննական-համեմատական բնագրերը։ Այդ բնագրերի ընձեռած փաստական հարուստ նյութերի հիման վրա էլ նա շարադրել է իր մենագրությունը։ Այստեղից էլ՝ ուսումնասիրության մեջ առաջադրված խնդիրների պատշաճ փաստարկավորումը և հեղինակի կողմից նյութի գերազանց իմացությունը։ Ավելացնենք նաև, որ Հ. Սահակյանը Ե. Քյոմուրճյանին նվիրված աշխատությունից բացի, տարիներ առաջ կազմել և հրատարակել է XVII—XVIII դդ. հայ աշուղների երգերի ժողովածուն։

Նյութի համակողմանի իմացությամբ Հ. Սահակյանը XVI—XVII դդ. հայ բանաստեղծությունը քննում է ոչ թե ըստ առանձին հեղինակների ու նրանց ապրած ժամանակի, որ մեծապես դժվարանում է բանաստեղծներից շատերի կենսագրական տվյալների բացակայության և նրանցից շատերի հատ ու կտոր բանաստեղծությունների առկայության պայմաններում, այլ ըստ այդ մոտ երկդարյա բանաստեղծության շոշափած թեմաների, մոտիվների, գաղափարական և գեղարվեստական ընդհանրությունների։ Քննության այս ընդհանրացված եղանակը բերել է իր ակնհայտ առավելությունները և մասամբ՝ անխուսափելի թերությունները։ Նման մոտեցմամբ հետազոտելով դարաշրջանի հայ բանաստեղծությունը, հեղինակն այն դրել է ժամանակագրական մեկ ընդհանուր հարթության վրա, զանց առնելով նույն հարթության մեջ մտնող առավել կոնկրետ ու փոքր ժամանակահատվածները։ Դրանով նա իրավասնն առարկայացրել է այդ երկհարյուրամյա հայ բանաստեղծությունը՝ իբրև մի հարաբերական ինքնակա երևույթ և կարողացել է դիտել, բացահայտել և սահմանել այդ բանաստեղծության ընդհանուր առարկայական հատկանիշները, նրա պատմական զարգացման ներքին օրինաչափությունները։ Այսպես. տվյալ ժամանակաշրջանի հայ բանաստեղծության մեջ Հ. Սահակյանը բացահայտել է վերջնիս դեմքը բնորոշող կրոնական, պատմա-քաղաքական, սոցիալական, սիրո, բնության, գինու և տրախության թեմատիկ մոտիվները, որոնք սերում են նախընթաց շրջանի հայ բանաստեղծությունից։ Տարբեր ու բազմաթիվ հեղինակների համապատասխան մոտիվներով ստեղծագործությունների համախմբված քննություններով և նախընթաց դարերի նույն մոտիվներով գրված բանաստեղծությունների համեմատությամբ դրքի հեղինակը ցույց է տալիս աշխարհայացքային ու գեղագիտական ընկալումների այն որակական անցումներն ու փոփոխությունները, որ ապրում է դարաշրջանի բանաստեղծությունը նախորդ դարերի համեմատությամբ։ Դրանք, ամենից առաջ, դրսևորվում են կրոնական-ճգնավորական ոգու աստիճանական թուլացման, առանձին դեպքերում նաև՝ իսպառ վերացման, կրոնական գաղափարների սոցիալ-քաղաքական նոր իմաստավորման, հոգու և մարմնի հակամարտության քրիստոնեական ընկալման մեջ՝ մարմնականի, աշխարհիկի, կյանքի վայելքի գաղափարի

աստիճանական բարձրացման և այդ հակամարտության խպառ վերացման երևույթների մեջ։

Բացի այդ, Հ. Սահակյանը քննության առարկա է դարձնում դարաշրջանի բանաստեղծության առաջ բերած նոր թեմատիկ մոտիվները (կենցաղագրական-զավեշտական, նոթագրական, մարդկային կյանքի բնախոսական անցումներ և այլն), որոնք բացակայում էին նախորդ դարերի բանաստեղծների երկերում։ Հիշյալ թեմաների ու մոտիվների, ինչպես նաև ժողովրդական կյանքի կենդանի պատկերների, ժողովրդական-խոսակցական լեզվի, մտածողության, բանահյուսական ստեղծագործությունների հնարանքների ու տարրերի գրավոր բանաստեղծություն կատարված ներհսրդման իրողությունների մեջ մենագրության հեղինակն արդարացիորեն տեսնում է բանաստեղծության ժողովրդայնացում և XVII դ. համարում «մեր բանաստեղծության ժողովրդականացման ամենաընդգծված ժամանակաշրջաններից մեկը» (էջ 329)։

Թեմաների և մոտիվների մակարդակով կատարված ուսումնասիրության այս առարկայական եղանակը հնարավորություն է ընձեռել հեղինակին բացահայտելու ավանդականության և նորարարության դրա-պատմական օրինաչափության որոշ կողմեր, որով միմյանց են առնչվում ու միմյանցից տարբերվում գրական տարբեր դարաշրջաններն ու երևույթները։

Մենագրության սկզբից մինչև վերջ, տարբեր թեմաների ու մոտիվների առնչությամբ, քննվում են XVI—XVII դդ. բանաստեղծների՝ միջնադարյան տաղերգության գրական ավանդների ժառանգման, սեփական նորի հետ զուգակցման կամ այդ ավանդների վերաիմաստավորման տարբեր երևույթները, որոնք դրսևորվում են թե՛ բանաստեղծական մտածողության, աշխարհայացքի, թե՛ թեմատիկայի, պատկերավորման համակարգի և տաղաչափության մեջ։ Գրական ավանդների փոխանցման երևույթի բացահայտման փորձեր է անում հեղինակը նաև դարաշրջանի տարբեր բանաստեղծների ստեղծագործությունների միջև։

Հ. Սահակյանի որդեգրած հետազոտության եղանակը, ինչպես նշեցինք, ունի նաև իր անխուսափելի պակասությունները։ Ամենից առաջ բանաստեղծության նման ինքնակա առարկայացումը ինչ-որ չափով կտրում է այն իր առավել կոնկրետ պատմական հիմքից, զրկում յուրաքանչյուր բանաստեղծություն իր հարուցման կոնկրետ ստեղծագործական դրդապատճառից։ Ապա՝ նման քննությունների դեպքում անհնար է ուրվագծել յուրաքանչյուր հեղինակի բանաստեղծական ամբողջական դիմանկարը, քանզի նրանց առանձին գործերը քննարկվում են տարբեր բանաստեղծների համանման թեմաների և մոտիվների զուգորդությամբ։ Այստեղից էլ միևնույն հեղինակի մասին մենագրության տարբեր գլուխներում առաջացել են անխուսափելի կրկնություններ, միևնույն կամ նման մտքերի հաճախումներ և այլն։ Այսուհանդերձ, Հ. Սահակյանի նախընտրած թեմաների և մոտիվների մակարդակով կատարվող հետազոտությունների եղանակը, որ լայնորեն կիրառվում է կոնկրետ ժամանակ և հեղինակ չճանաչող բանահյուսական երկերի հետազոտության մեջ, տվյալ պարագայում ամենանպատակահարմարն է, քանզի քննարկվող ժամանակաշրջանի բազմաթիվ բանաստեղծներից քչերի կենսագրական տվյալներն են հայտնի և շատերից բանաստեղծական քիչ նմուշներ են մեզ հասել։

Անկախ ուսումնասիրության մեթոդից բխող այդ անխուսափելի թերությունից, Հ. Սահակյանի մենագրությունը լիովին վերարտադրում է XVI—XVII դդ. հայ բանաստեղծության ամբողջական պատկերը իր թեմատիկայի ու գեղարվեստական ձևերի բազմազանության մեջ և բացահայտում գրական տվյալ ժամանակաշրջանի բնորոշ հատկանիշներն ու օրինաչափությունները։ Դրանցով ի հայտ են դալիս գաղափարական ու գեղարվեստական այն ազդեցները, որոնցով XVI—XVII դդ. հայ բանաստեղծությունը կապակցվում է նախընթաց և հետագա դարերի բանաստեղծական մտածողությանը և դառնում ինքնին կարևոր կապակցող օղակ հայոց հին գրականության զարգացման ընդհանուր շղթայում։

«Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» աշխատությունը գալիս է լրացնելու հայ հին գրականության պատմագիտության մի մեծ բաց, այն է՝ հետազոտելու XVI—XVII դդ. բազմաթիվ մանր բանաստեղծների չուսումնասիրված երկերը, որոնք նախապատրաստական հող հանդիսացան դարաշրջանի նշանավոր բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի և առհասարակ մեր բանաստեղծության գալիք ճյուղավորումների համար։ Գրապատմական այս հանգամանքն էլ կազմում է քննարկվող մենագրության ամենակարևոր արժանիքը։ Մնում է միայն ցանկալ, որ Հ. Սահակյանը շուտով հրապարակ հանի իր կազմած XVI—XVII դդ. բանաստեղծների երկերի քննական-համեմատական բնագրերը, որոնք այս մենագրության հետ տեսականորեն ու գործնականորեն կամփոփեն ու կամբողջականացնեն տվյալ դարաշրջանի հայ բանաստեղծության պատկերը։

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր